Լրագրողների Իրավունքները Պաշտպանող Օտարերկրյա Պետությունների Օրենսդրական Դաշտը

I. Ֆրանսիա

Քրեական օրենսգիրք

Իրավախախտում պետական իշխանության դեմ

Գլուխ I. Իրավախախտում հասարակական խաղաղության դեմ

Բաժին 1. Խոսքի, աշխատանքի, միավորումների, հանրահավաքների և ժողովների ազատությանը խոչընդոտելը

Հոդված 431-1 (ուժի մեջ է 2002թ. հունվարի 1-ից)

1. Խոսքի, աշխատանքի, միավորումների, հանրահավաքների և ժողովների ազատությանը խոչընդոտելը, նախնական համաձայնությամբ, սպառնալիքներ գործադրելով պատժվում է ազատազրկմամբ՝ մեկ տարի ժամկետով և տուգանքով՝ € 15000 Եվրո գումարի չափով:

2. Առաջին մասում նշված ազատություններից որևէ մեկի նկատմամբ նույն արարքը, որը կատարվել է՝

ա) ծեծով զուգորդված

բ) բռնի գործողությունների գործադրմամբ, կամ

գ) գույքի ոչնչացմամբ կամ գույքին վնաս հասցնելով

պատժվում է ազատազրկմամբ՝ երեք տարի ժամկետով և տուգանքով՝ € 45000 Եվրո գումարի չափով:

Հոդված 432-2

431-1 հոդվածով նախատեսված հանցագործությունների մեջ մեղադրվող ֆիզիկական անձինք կրում են նաև հետևյալ լրացուցիչ պատիժները՝

1. 131-26 հոդվածով ամրագրված պայմաններին համապատասխան քաղաքացիական և ընտանեկան իրավունքներից զրկում, որոնցից են ընտրելու, ընտրվելու, դատական պաշտոն զբաղեցնելու, փորձագիտական կարծիք դատարանին տրամադրելու, դատարանում կողմերից մեկին ներկայացնելու կամ իրավական օգնություն տրամադրելու, խնամակալ կամ հոգաբարձու լինելու իրավունքները:

2. 131-27 հոդվածով ամրագրված պայմաններին համապատասխան արգելվում է վարել պետական պաշտոն կամ ծավալել հասարակական կամ մասնագիտական գործունեություն, որի պատճառով կամ որի իրականացման արդյունքում կատարվել է հանցագործությունը,

3. զենք կրելու կամ պահելու արգելում, որը ենթակա է թույլատվության առավելագույնը հինգ տարի ժամկետով:

II. Շվեդիա

Քրեական օրենսգիրք

Գլուխ 18
Պետական հանցագործությունների մասին
Բաժին 5
Անձը, որը անօրինական պարտադրում կամ սպառնալիք է գործադրում՝ նպատակ ունենալով ազդեցություն ունենալ հասարակական կարծիքի ձևավորման վրա կամ ոտնձգել քաղաքական կազմակերպության կամ առևտրային կամ արդյունաբերական միավորման շրջանակներում գործունեության ազատության նկատմամբ և դրանով վտանգում է խոսքի, հանրահավաքի կամ միավորման ազատությանը, դատապարտվում է քաղաքացիական ազատության դեմ կատարված հանցագործության համար՝ առավելագույնը վեց տարի ազատազրկմամբ:

III. Սլովենիա

Քրեական օրենսգիրք
(2004թ. սեպտեմբերի 28)
Տպագրությանը և հեռարձակումը խոչընդոտելը
Հոդված 157
Յուրաքանչյուր ոք, ով անօրինական ճանապարհով խոչընդոտում է թերթերի, գրքերի կամ որևէ այլ տպագրված նյութերի տպագրումը, վաճառքը կամ տարածումը կամ ռադիո կամ հեռուստատեսային հաղորդումների հեռարձակումը դատապարտվում է ազատազրկմամբ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

IV. Բուլղարիայի Հանրապետություն

Քրեական օրենսգիրք
Հոդված 169, կետ b
Անձը, որը ուժի գործադրմամբ, սպառնալիքով կամ որևէ այլ անօրինական ճանապարհով խափանում է մեկ ուրիշին իրականացնելու իր սահմանադրական քաղաքական իրավունքները, պատժվում է ազատազրկմամբ մինչև երեք տարի ժամկետով կամ տուգանքով մինչև քսան հազար բուլղարական լեվով:

Հոդված 169, կետ c
169-րդ հոդվածի a և b կետերով նախատեսված արարքը, որը կատարվել է պաշտոնատար անձի կողմից իր պարտականությունների կատարման ընթացքում կամ դրա հետ կապված, պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև հինգ տարի ժամկետով:

V. Ուկրաինա

Լրագրողի նկատմամբ իր մասնագիտական պարտականությունները իրագործելու ընթացքում կատարված հանցագործությունը կամ իր պաշտոնական գործունեությունը խոչընդոտելը հավասար է այն պատասխանատվությանը, որը կիրառվում է իրավապահ մարմնի աշխատողի նկատմամբ կատարված նույն արարքի համար:

Քրեական Օրենսգիրք
(01.09.2001)
Հոդված 171.
Լրագրողի օրինական մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը
1. Լրագրողի օրինական մասնագիտական գործունեությանը կանխամտածված խոչընդոտելը պատժվում է՝ քաղաքացիների չհարկված նվազագույն եկամուտների մինչև հիսնապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը մինչև վեց ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Լրագրողի հետապնդումը, նրա մասնագիտական պարտականությունների կատարման համար, ինչպիսին է քննադատությունը, որը կատարվել է պաշտոնատար անձի կամ մի խումբ անձանց կողմից պատժվում է՝ տուգանքով քաղաքացիների չհարկված նվազագույն եկամուտների մինչև երկուհարյուրապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ մինչև հինգ տարի ժամկետով կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

VI. Կանադա

Քրեական Օրենսգիրք (R.S. 1985, c. C-46)
Արդարադատության համակարգի մասնակցի կամ լրագրողի ահաբեկում
Հոդված 423.1
(1) Ոչ ոք չպետք է ներգրավվի, առանց օրինական թույլատվության 2-րդ ենթակետում նշված արարքներում՝ նպատակ ունենալով ստեղծել ահարկու իրավիճակ՝

ա) մարդկանց խմբում կամ հասարակությունում, խոչընդոտելու համար քրեական արդարադատության իրականացմանը;

բ) արդարադատության համակարգի մասնակցի նկատմամբ՝ իր պարտականությունների կատարումը խոչընդոտելու նպատակով; կամ

գ) <u>լրագրողի նկատմամբ</u>՝ նպատակ ունենալով խոչընդոտել նրան տարածելու հանրության համար քրեական կազմակերպության մասին տեղեկություններ:

Արգելված արարքներ

(2) 1-ին ենթակետում նշված արարքը բաղկացած է հետևյալ հատկանիշներից՝

ա) բռնության գործադրում արդարադատության համակարգի մասնակցի կամ <u>լրագրողի</u> նկատմամբ կամ նրանց ծանոթ որևիցե մեկի նկատմամբ, ինչպես նաև նշված անձանց որևէ մեկի գույքի ոչնչացում կամ վնասի հարուցում,

բ) Կանադայում կամ որևէ այլ վայրում (ա) կետում նշված արարքներում ներգրավված լինելու սպառնալիք,

գ) արդարադատության համակարգի մասնակցի կամ լրագրողի, ինչպես նաև նրանց ծանոթ որևիցե մեկի համառորեն և շարունակաբար հետապնդում, այդ թվում՝ այդ անձանց հետապնդումը ավտոճանապարհով՝ հասարակական կարգի խախտմամբ,

դ) արդարադատության համակարգի մասնակցի կամ լրագրողի, ինչպես նաև նրանց ծանոթ որևիցե մեկի հետ անմիջականորեն կամ անուղղակի շարունակաբար հաղորդակցվելը,

ե) արդարադատության համակարգի մասնակցի կամ լրագրողի, ինչպես նաև նրանց ծանոթ որևիցե մեկի բնակավայրի, աշխատավայրի, դպրոցի, առևտրային գործունեության վայրի, կամ այլ վայրի, որտեղ նշված անձանցից մեկը պատահել է գտնվել, արգելափակումը կամ հսկողությունը:

Պատիժը

Այս հոդվածը խախտելու դեպքում, յուրաքանչյուր ոք մեղավոր կլինի դատապարտելի արարքի մեջ և կպատժվի ազատազրկմամբ՝ առավելագույնը տասնչորս տարի ժամկետով:

«Ինտերնյուս» ՀԿ
Իրավաբանական Բաժին